

**ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ  
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Էջմիածնի համայնքապետարանի մրցութային հանձնաժողովը հրավիրում է բաց մրցույթ: Այն տեղի կունենա 2021թ հոկտեմբերի 12-ին, ժամը 12:00-ին, Էջմիածնի համայնքապետարանի շենքում /հասցե ք. Էջմիածին Սուրբ Մ. Մաշտոց փողոց 0 շենք/: Կառուցապատման իրավունքով մրցութային կարգով տրամադրվում է Էջմիածին քաղաքի Արագածի զանգված 1/98 հասցեում գտնվող 0,006հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության /կադաստրային ծածկագիր 04-002-0822-0175/ հողամասը 5 /հինգ/ տարի ժամկետով բնակչությանը ծառայություններ մատուցելու նպատակով՝ մեկ հարկանի խանութի կառուցման համար: Հողամասը ընդգրկվում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում և չի առաջացնում սերվիտուտ, հողամասում բացակայում են նաև ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի և ճանապարհների առկայությունը: Ծածկագիր՝ ԷՔԿ 4: Կառույցի թույլատրելի բարձրությունը՝ մինչև 5,0 մետր, կառուցապատման խտության գործակիցը՝ 2,0, կառուցապատումը՝ 100 տոկոս, կանաչապատումը՝ 0 տոկոս, մեկնարկային գինը՝ յուրաքանչյուր 1/մեկ/քմ-ի համար տարեկան 230 /երկու հարյուր երեսուն/ ՀՀ դրամ վարձավճարով, ճարտարապետահատակագծային առաջադրանքի գործնության ժամկետ՝ 6 ամիս, նախագիծը մակ փուլով:

Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցութային հանձնաժողովին պետք է ներկայացնեն՝ հայտ, մասնակցության վճար 20000 /քսան հազար/ ՀՀ դրամի մուծման անդորրագիր /Էջմիածնի համայնքապետարանի 900325151109 հաշվին/, ֆիզիկական անձանց անձնագրի պատճենները, իրավաբանական անձանց հիմնադիր փաստաթղթերի սահմանված կարգով հաստատված պատճենները, իսկ մրցույթի անցկացման օրը մուծել մրցույթի նախավճար՝ առարկայի նախնական գնի 5 տոկոսի չափով: Հայտերի ընդունումը դադարում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

Մրցույթի արդյունքը ամփոփելիս և հաղթողին որոշելիս հաշվի են առնվում՝ առաջարկվող վարձավճարի չափը, մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է տվյալ համայնքի բնակչին կամ տվյալ համայնքում գրանցված իրավաբանական անձին: Մրցույթում հաղթող ճանաչված անձին 10 օրյա ժամկետում տրամադրվում է որոշում և կնքվում հողամասի կառուցապատման պայմանագիր: Հայտերն ընդունվում են ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 10:00-12:00 և 14:30-ից 17:30-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից /հայտերի ընդունման համար զանգահարել՝ +374 231 5 36 93 /600/ հեռախոսահամարով/: